



Բաղեն-Վյուրթեմբերգի Հայ Համայնք  
Armenische Gemeinde Baden-Württemberg e.V.

Anerkannter Träger  
der freien Jugendhilfe i. S.  
des § 75 SGB VIII des KJHG

Amtsgericht Göppingen  
Registergericht Nr. 659

Finanzamt Göppingen Ü.L.  
Nr.: 58/63089/05313

**Datum: 27.10.2016**  
**Aktenzeichen:**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐԸ ՇՏՈՒՏԳԱՐՏՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ**

Հոկտեմբերի 13 – 23-ը Գերմանիայի Բաղեն-Վյուրթեմբերգ Երկրամասի հայ համայնքի և նրա հոգևոր հովիվ արժանապատվ Ս. Տիրատուր քին. Սարդարյանի նախաձեռնությամբ Շտուտգարտում անցկացվեցին «Հայ մշակույթի օրեր», որոնց այս տարի կրում էին «Ես օտար էի, և դուք ինձ ընդունեցիք» խորագիրը: Այս օրերի ընթացքում անցկացվեցին հաերգներ, ցուցահանդեսներ, գրքերի շնորհանդեսներ, գիտաժողով և տեղի ունեցան եկեղեցական արարողություններ:

Միջոցառումների մեկնարկը տրվեց հոկտեմբեր 13-ին, որն իրենց ներկայությամբ պատվել էին Գերմանիայի Դաշնությունում ՀՀ Դեսպան պարոն Աշոտ Սմբատյանը, Շտուտգարտի քաղաքապետ պարոն Վերներ Վյոլֆլեն, որոնք հանդես եկան ողջույնի խոսքով, ինչպես նաև այլ քաղաքական, հանրային և եկեղեցական գործիչներ: Շտուտգարտի «Հայ Մշակույթի Օրեր»-ի մասնակիցներին ողջույնի խոսք էր հղել նաև ՀՀ Մփյուրքի Նախարար տիկին Հրանուշ Հակոբյանը:

Ողջուններին հաջորդեց գերմանահայ վիպագիր Ռաֆաելա Թովմասյանի «Մարդագայլ թե աղավնի» գրքի շնորհանդեսը: Գիրքը պատմում է իր ակնունքները փնտրող, գերմանիայում ծնված մի հայուհու պատմություն: Երաժշտական բաժնում հանդիսատեսը ունկնդրեց Լիլիթ Սարգսյանի հեղինակական երգերը: Տիկին Սարգսյանը հանդիսատեսին ներկայացրեց նաև Բուլատ Օկուջավաի երգերի հաերեն թարգմանություններից մի քանիսը: Հեղինակին իր գեղեցիկ ու մեղմ ձայնով ձայնակցում էր Աշխեն Վարժապետյանը:

Հոկտեմբերի 14-ին Շտուտգարտի Աստվածաշնչյան թանգարանում տեղի ունեցավ «Աստվածաշնչյան հետքեր Գերմանիայում, Իսրաելում և Հայաստանում» վերնագրով դասախոսություն, որը վարում էին թանգարանի տնօրեն՝ տիկին Ֆրանցիսկա Շտոկեր-

**Post:**

Armenische Gemeinde BW  
Postfach 126, D-73001 Göppingen  
Tel.: +49 (0) 7161 8084717  
Fax: +49 (0) 7161 8084709  
www.agbw.org  
www.armenische-kultrtage-stuttgart.de

**Gemeindepfarrer:**

Pfr. Dr. Diradur Sardaryan  
Email: gemeindepfarrer@agbw.org

**Gemeindevorstand:**

Corc Kosejian  
Email: vorstand@agbw.org

**Bankverbindung:**

Kreissparkasse Göppingen  
IBAN: DE1161050000001234026  
BIC-/SWIFT: GOPSDE6GXXX

**Spendenkonto:**

Kreissparkasse Göppingen  
IBAN: DE22610500000049033973  
BIC-/SWIFT: GOPSDE6GXXX

**DIÖZESE DER ARMENISCHEN KIRCHE**

Allensteinerstr. 5, D-50735. Köln  
Tel.: +49 (0) 221 7126223  
Fax.: +49 (0) 221 7126267  
E-Mail: info@armenische-kirche.de  
www.armenische-kirche.de

Շվարցը և Տ. Տիրատուր քին. Սարդարյանը: Դասախոսությունից հետո հանդիսատեսը առիթ ունեցավ շփվելու Երուսաղեմի միաբան, հոգեշնորհ Ղեվոնդ վարդապետի հետ, որի «Հայկական Երուսաղեմ» ֆոտոցուցահանդեսը նույն թանգարանում բացվել էր հոկտեմբեր 5-ին: Վարդապետը պատմեց Հայ Երուսաղեմի ինչպես նաև իր ստեղծագործական ուղղու մասին: Նույն օրը երեկոյան երիտասարդ հայ կոմպոզիտոր Միքայլ Բագրատունին ելույթ ունեցավ իր խմբի հետ, հանդիսատեսին ներկայացնելով DREAMS ձայնասկավառակը:

Հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ «Պատերազմ, Տեղահանում, Արտագաղթ» խորագիրը կրող գիտաժողով, որի ընթացքում քննարկվեցին քրիստոնյաների ապագան Սիրիայում եւ ընդհանրապես Մերձավոր Արևելքում, քրիստոնյա փախստականների իրավիճակը Գերմանիայում, ինչպես նաև առկա խնդիրների լուծման տարբերակները:

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ ՀՀ ժող. արտիստ, կոմպոզիտոր Ռաբերթ Ամիրխանյանի և երգչուհի Սեդա Ամիր-Քարայանի անմոռանալի համերգը: Համերգի առաջին բաժնում երգում էր հենց ինքը մատերոն, ասելով թե՛ «երգիչը նա չէ, ով կարող է երգել, այլ նա, ով չի կարող չերգել»: Երկրորդ բաժնում Մատերոն Ամիրխանյանը հանդես եկավ երգչուհի Սեդա Ամիր-Վարայանի հետ, որն իր գեղեցիկ ու հմայիչ ձայնով հուզեց հանդիսատեսին:

Հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ միջեկեղեցական արարողություն, որի ընթացքում խաղաղության աղոթք բարձրացվեց առ Աստված: Արարողությունից հետո հանրությունը առիթ ունեցավ ծանոթանալու Բադեն-Վյուրթեմբերգի Հայ Համայնքի առորյաին, նրա ծառայությանն ու աշխատանքին: Արժանապատիվ Տ. Տիրատուր քին.-ի ներմուծական խոսքից հետո ելույթ ունեցան «Մուրբ Մեսրոպ Մաշտոց» կիրակնորյա դպրոցի շնորհալի սաները: Իսկ Հայաստանից ու Միացյալ Նահանգներից համայնքում հյուրընկալված Սիրարփի Միքայլյանը և Ադրիներ Կարապետյանը հանդիսատեսին ներկայացրեցին իրենց ձեռքի աշխատանքները:

Երեկոյան հանդիսատեսին սպասում էր դասական երաժշտության երեկո: Հայրենիքում և արտերկրում ճանաչված ու պահանջարկ վայելող դաշնակահար-կոնցերտմայստեր Անահիտ Տեր-Տաճաթյանի նվագակցությամբ դասական գոհարների անգուգական կատարմամբ ելույթ ունեցավ Գուրգեն Բավեյանը:

Հոկտեմբերի 19-ին գերմանուհի Կոնստանցե Յոհնի «40 օր Հայաստանում» գրքի շնորհանդեսն էր, որը պատմում է հեղինակի ապրումների և տպավորությունների մասին, հայ մշակույթի, պատմության և հայ մարդու հետ շփման մասին:

Հոկտեմբեր 22-ին բանաստեղծուհի Ագապի Մկրտչյանը բանախոսեց Հայկական սփյուռքում ստեղծվող գրականության մասին, ներկայացրեց իր բանաստեղծությունները հայերենով և գերմաներենով: Հանդիսատեսի ուշադրությանը ներկայացվեց նաև Պարույր Սևակի բանաստեղծությունների գերմաներեն

թարգմանություններից միքանիսը: Շտուտգարտի Կոնսերվատորիայի ուսանողուհի Աննա Ավդալյանը միջոցառումը հարստացրեց Կոմիտասի մշակած ժողովրդական երգերի գեղեցիկ կատարումով:

Նույն օրը երեկոյան, Շտուտգարտի Մարթին Լութեր Եկեղեցում, հանրաճանաչ դաշնակահար, ՀՀ վաստակավոր արտիստ, Հայկ Մելիքյանը, անգուգական ելույթ ունեցավ: Ունկանդրին ներկայացվեցին Վիլլի Վայների և հայ մեծանուն կոմպոզիտորներ՝ Կոմիտասի, Էդուարդ Միրզոյանի, Առնո Բաբաջանյանի և Հարություն Դելալյանի ստեղծագործությունները:

Հայ Մշակույթի Օրերը Շտուտգարտում ավարտվեցին հոկտեմբեր 23-ին: Առավոտյան Գյոփինգենի Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագ: Այդ օրը Հայ Առաքելական Եկեղեցին տոնում էր Գյուտ Խաչի տոնը, որը նաև վերոհիշյալ եկեղեցու անվանակոչության տոնն է:

Նույն օրը երեկոյան մշակույթի օրերը եզրափակվեցին Հայաստանից ժամանած Արաբկիրի Հայորդյաց տան «Ամբերդ» պարային համույթի ելույթով: Հանդիսատեսին հրամցված գեղեցիկ հայ ժողովրդական և ազգագրական պարերը ինչպես նաև երգչուհի Գայանե Ավդալյանի կատարած ժողովրդական երգերը աննկարագրելի ջերմությամբ հիացրեցին հայ և գերմանացի հանդիսատեսին:

Երեկոյի ավարտին ՀՀ Սփյուռքի Նախարարության պատվոգրեր հանձնվեցին «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհիներ՝ Սրբուհի Գասպարյանին և Անի Իսրաելյանին, սփյուռքում հայոց լեզվի պահպանման և զարգացման, ինչպես նաև հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար:

Բաղեն-Վյուրթեմբերգի Հայ Համայնքը խորհին շնորհակալություն է հայտնում բոլոր մասնակիցներին և աջակիցներին: Հատկապես պարոն Յոհաննես Կերխերին, պարոն Երնստ-Լուդվիգ Դրայսին, Հոնորարիյուպատոս Գյունտեր Պիլարսկուն, ինչպես նաև Շտուտգարտի քաղաքապետարանին և Գերմանիայի Դաշնությունում ՀՀ Դեսպանատանը, հանձինս ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Աշոտ Սմբատյանին:

Հատուկ շնորհակալություն նաև ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին և Համահայկական աշխարհագրական ասոցիացիայի նախագահ Ռաֆայել Հովհաննիսյանին:

Նշենք, որ «Հայ Մշակույթի Օրեր Շտուտգարտում» նախագիծը առիթ է ստեղծում, որպեսզի տարածաշրջանում բնակվող գերմանացիները հաղորդակցվեն հայ մշակույթին ու պատմությանը, ծանոթանան հայերի և Հայաստանի հետ, իսկ Սփյուռքում ապրող հայրենակիցներին հնարավորություն է տալիս շփվելու սեփական մշակույթի հետ: